դարձուածներ՝ որ նա իր զօրքերու քայլերը փոխանակ Հայաստանի վրայ ուղղելու, դարձուց դէպի Պարսկաստան։

Անոնք անցան մինչև Ուրմիա, և կը հասնէին մինչև Թաւրիզ, եթէ արտաքին միջամտութիւններ չը լինէին։ Այս քրդո-պարսկական պատերազմին կը մասնակցէր և իր որդի երիտասարդ Շէյխ Ապիւլ-Կատիր՝ որ ըստ քրդական աղբիւրներու՝ ունէր 55,000 կռուող։ Իսկ Շէյխ Ուպէյտուլլահ կը պահէր իր շուրջը մօտ 40,000 կռուող։

Հայ ցեղի ջնջման այս քաղաքականութիւնը որ յաջողած էր Սուլթան Համիտը, նորէն ձախողութեան կը մատնուի. և Շէյխ Ուպէյտուլլահը բռնուելով կ'աքսորուի Մէքքէ. թէ՛ ի պատիժ իր ծրագիրներու գործադրութեան չը դնելուն՝ և թէ ի գոհունակութիւն արտաքին ազդեցութիւններու։ Թէև Շէյխ Ուպէյտուլլահը Մէքքէէն իր ծննդավայրը վերադառնալով փախստական՝ Շամզտինան մտաւ, բայց դարձեալ արտաքին պահանջները կրկնուեցան, և նա այս անգամ բռնուելով նորէն Մէքքէ տարուեցաւ ընտանեօք, իր հետն ունենալով և այժմեայ Շէյխը՝ որդի Ապիւլ-Կատիրը։

Շէյխ Ուպէյտուլլահը մեռաւ և թաղուեցաւ ի Մէքքէ, իսկ որդին և ընտանիքը գ-ոհրնկէց Սուլթանի չնորհացն արժանանալով թէև վերադարձան ի Պոլիս՝ բայց ճանաչուելով իբր ազատական, նորէն աքսորուեցան. Սահմանադրութեան հրատարակութենէն վերջը, Շէյխ Ապիւլ-Կատիրը ազատուեցաւ ու Պոլիս գալով դարձաւ Օսմ. ծերակոյտի անդամ։

Շէյխ Ուպէյտուլլահի կրօնա-քաղաքական ասպարէզը կանչուելու խնդիրը հետևեալ կերպով կը ներկայացնէ ականատես մը՝ 1906ին Թիֆլիս հրատարակուած «Մուրճ» ամսագրին մէջ։

«Մար-Շիմոնը անհանգստացած՝ և յիշելով միևնոյն ատեն 1842 թուին մեծ ջարդերը քիւրդ ցեղապետ Պէտիրխան բէգին ձեռամբ կատարուած, փոյթ էր տարեր անմիջապէս տեղեկագիր ուղղել Ռուսաց և Անգլիացւոց կոնսիւլներին՝ ինչպէս նաև հայոց առաջնորդին, ուշադրութիւն հրաւիրելով այդ